ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1600—1724 թթ.

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի էթնոքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային-պատմության առանցքային պրոբլեմների լուսաբանման գործում կարևոր նշանակություն ունի երկրամասում բնակչության էթնոդավանանքային կազմի և իրադրության, նրանց փոփոխությունների ուսումնասիրությունը։ Տվյալ դեպքում մեզ համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Արևելյան Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկի՝ Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները XVII—XVIII դդ., երբ այն համարվում էր Իրանի հյուսիս-արևմտյան վիլայեթներից Զուխուր-Սաադի (հետագայում՝ Երևանի խանություն) վարչական կենտրոնը։ Հետաքրքրությունը պրոբլեմի նկատմամբ աճում է նաև քաղաքի բնակչության էթնիկական կազմի վերաբերյալ եղած կարծիքների հակասականությամբ[1]։ Ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան պատմագրության մեջ, ելնելով հիմնականում նույն աղբյուրագիտական հիմքից, հայտնվել և այսօր էլ շարունակում են հայտնվել իրարամերժ կարծիքներ։ Սակայն չափազանց ուշագրավ է, որ քաղաքի բնակչության էթնիկական կազմի վերաբերյալ աղբյուրների տեղեկությունները քննելիս ուսումնասիրողներից ոչ մեկը հաշվի չի նստել միջնադարյան քաղաքի հասարակական ֆունկցիաներն արտահայտող կառուցվածքային (բերդ, բուն քաղաք կամ բնակավայր, պարիսպներ) առանձնահատկությունների հետ։

Դեռևս Վ. Վ. Բարտոլդը Վ. Ա. Ժուկովսկու «Развалины старого Мерва» աշխատության[2] հրատարակության առիթով խիստ քննադատել է աղբյուրների տեղեկությունների նկատմամբ այսպիսի վերաբերմունքը։ Քննադատության պատճառը պարսկա-արաբական աղբյուրներում քաղաքի կառուցվածքային տարբեր մասերի ֆունկցիոնալ առանձնահատկությունները արտահայտող մի շարք տերմինների[3] միանշանակ օգտագործումն էր, չնայած նրանց ունեցած կոնկրետ ու որոշակի բովանդակությանը։ Տվյալ երևույթի հետ մեկտեղ պետք է հաշվի առնել նաև աղբյուրների տեղեկություններում բազմիցս հանդիպող տերմինի բազմանշանակ օգտագործումը։ Բնորոշ օրինակ կարող է ծառայել XVI—XVII դդ. ռուսական աղբյուրներում «город» տերմինի գործածությունը։ Այն միջնադարյան հասարակության պայմաններում կարող էր նշանակել և՛ պաշտպանական ամրություն (ամրոց, բերդ) կամ այդ ամրության ներսում

---

[1] *Այստեղ բավարարվում ենք նշելով հետևյալ հիմնական գրականությունը. Ղ. Ալիշան. Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց. Վենետիկ, 1890, էջ 299—320։ Ե. Շահադիզ. Հին Երևանը. Երևան, 1931։ Թ. Հակոբյան. Երևանի պատմությունը (1500—1800 թթ.) Երևան 1971, კ. ᲙᲣᲪᲘᲐ. აღმოსავლეთ ამიერკავკასიის ქალაქები XVI—XVIII საუკუნეებში. თბ., 1976; К. К. Куция. Города Восточного Закавказья в XV—первой половине XVIII вв. Автореферат докт. дисс., Тбилиси, 1975; А. П. Новосельцев. Города Азербайджана и Восточной Армении в XVII—XVIII вв.—История СССР, 1959, № 1, с. 87—108.*

[2] В. В. Бартольд. К истории Мерва.—Сочинения, т. IV, М., 1966, с. 172—195.

[3] *Մեդինա՝ բուն քաղաք կամ սկզբնական քաղաքային բնակատեղի, քուհենդիզ՝ ամրոց, որը կարող էր գտնվել ինչպես մեդինայի ներսում, այնպես էլ դրսում, ռաբաթ՝ քաղաքը եղրափակող պարիսպներն արվարձանների հետ միասին կամ միայն արվարձանները (ի հակադրություն «բուն քաղաքի»), ռուստակ՝ ղյուղախումբ քաղաքի շրջակայքում և այլն։*

եղած բնակավայր, և՛ առանձին բնակավայր, իսկ երբեմն էլ՝ այդ երկուսը (город և посад) միասին[4]։

Նույն երևույթը նկատվում է նաև Երևանի բնակչության վերաբերյալ եղած սկզբնաղբյուրների տեղեկություններ քննելիս։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարծիքների հակասականությունը պայմանավորված է և՛ հիշյալ տերմինների միանշանակ օգտագործմամբ, և՛ քաղաքի ու բերդի բնակչության վերաբերյալ սկզբնաղբյուրներում առկա տերմինների շփոթով։ Նշենք, որ ժամանակի աղբյուրներում «քաղաք» (ville, Stadt, bourg և այլն) անվանումը հաճախ տրվում էր բերդին, ուր նստում էին խանը, քաղաքային իշխանությունները, ապրում էր քաղաքի կայազորը, այն դեպքում, երբ բուն քաղաքը (բնակավայրը) հաճախ արձանագրվում էր որպես «արվարձան» (Vorstadt, faux-bourg և այլն), չնայած երբեմն նշվում էր նաև, որ վերջինիս տարածքը մի քանի անգամ գերազանցում է բերդի տարածքին։ Եվրոպական ուղեգրություններում հանդիպում են նաև տեղեկություններ, որտեղ այս երկու հասկացությունները շփոթվում են միմյանց հետ կամ նույնիմաստ տերմինով նշանակվում են միաժամանակ և՛ քաղաքը, և՛ բերդը։ Դա դիտելի է, օրինակ, XVII դարի 20-ական թթ. Հայաստանում կաթոլիկություն տարածելու առաքելությամբ ճանապարհորդած հայր Ֆիլիպի մի հաղորդման մեջ. «Les habitants de ce pays sont Arméniens chrétiens et ils vivent surtout dans les *bourgs*, car les *villes* sont prises par les Mahometans, qui y tiennent garnison et y ont la domination"[5] («այս երկրի բնակիչները քրիստոնյա հայեր են և ապրում են հատկապես քաղաքներում (bourgs), որովհետև բերդերը (villes) գրավված են մահմեդականների կողմից, որոնք այնտեղ իշխում և կայազորներ են պահում»)։ Բերված հատվածում ակնառու է երկու նույնիմաստ բառերի միաժամանակյա օգտագործում, սակայն տարբեր նշանակությամբ (bourg—քաղաք, բնակավայր, ville—բերդ, ամրոց)։

Առանց նման տերմինաբանական տարբերակումների դժվար է ուսումնասիրել քաղաքի բնակչության էթնիկական կազմը, հաշվի առնելով, որ այս տերմինների հետ է կապված քաղաքի բնակչության վերաբերյալ յուրաքանչյուր հիշատակություն[6]։

Ըստ ուսումնասիրողների XVI դարում Երևանը համարվում էր Մերձավոր Արևելքի ու Կովկասի ամենամիատարր էթնիկական կազմ ունեցող քաղաքնե-

---

[4] А. М. Сахаров. О термине «город» в источниках XVI в.—В кн.: Общество и государство феодальной России (Сборник статей, посвященный 70-летию акад. Л. В. Черепнина). М., 1975, с. 62—66; Я. Е. Водарский. Города и городское население России XVII в.—В кн.: Вопросы истории хозяйства и населения России XVII в. Очерки по исторической географии XVII в. М., 1974, с. 48—116.

[5] Voyage d'Orient du R. P. Philippe de la Très Sainte Trinite..., Lyon, 1669, p. 90. Հմմտ. S. Kévorkian. Témoignages de voyageurs sur le peuplement de l'Arménie au XVIIe s.—Revue des études arméniennes, Nouvelle série, t. XV, Paris, 1981, p. 442.

[6] Ձեռքի տակ չունենալու պատճառով չենք օգտագործել XVII դարում Երևան այցելած հետևյալ հեղինակների ուղեգրությունները՝ 1. Gemelli-Careri (J.-F.). Voyage du tour du monde Paris, 1719, 6 vol. 2. Poullet. Nonvelles relations du Levant qui contiennent diverses remarques forts curieuses non encore observées touchant la religion, les moeurs et la politique de plusieurs peuples. Avec une exacte description de l'Asie Mineure ou Natolie, des deux Arménie, du Courdistan, du Diarbek et autres Provinces méditerranéennes de l'Asie, du Royaume de Perse, etc. Paris. 1668, 3. Chinon G. de. Relations nouvelles du Levant ou traité de la religion, du gouvernement et des coutumes des Perses, des Arméniens et des Maures. Lyon, 1671.

րից մեկը, ուր բնակչության բացարձակ մեծամասնությունը հայեր էին[7]։ *XVI դարի Երևանի բնակչության թվի և էթնիկական կազմի ուսումնասիրման համար չափազանց մեծ արժեք կարող է ունենալ օսմանյան իշխողների կողմից 1591 թ. (999 թ. հջր.) կազմված Երևանի էյալեթի հարկացուցակը (թահրիր դեֆթեր), որը, սակայն, առ այսօր անտիպ է և պահվում է Ստամբուլի* Başvekalet arşivi-*ում*[8]։

Երևանը ըստ Տավերնիեի 1682 թ. հրատարակության

Երևանի բնակչության թվի մեջ որոշակի փոփոխություններ կատարվեցին XVII դարի առաջին քառորդում, պայմանավորված ռեգիոնում ռազմաքաղաքական իրադրության սրմամբ և շահ Աբբաս I-ի անդրկովկասյան արշավանք-

---

[7] ქ. კუცია. [illegible]..., გვ. 13—14; К. К. Куцproperitй. Указ. соч., с. 8. *Քաղաքի բնակչության թվի վերաբերյալ ուշագրավ է Դոն Խուան Պարսկաստանցու (XVI դ. վերջ—XVII դ. սկիզբ) այն գիտողությունը, ըստ որի թե՛ Երևանը, թե՛ Գանձակը ունեին յուրաքանչյուրը 250 հազար ծուխ ազգաբնակչություն։ Այստեղ հեղինակը քաղաքին է վերագրում ողջ նահանգի բնակչության թիվը. սակայն մեզ համար կարևորը այն է, որ նա երկու քաղաքների բնակչության թիվը հավասար է ցույց տալիս։* (Don Juan of Persia. A Shi'ah Catholic 1560—1604. Translated and edited with an Introduction by G. Le Strange. London, 1926, p. 41, 42. *Սիդոնի եպիսկոպոսի հաղորդման համաձայն 1587 թ. «Մեծ Հայքում» կաթողիկոսի իրավասության տակ կային ավելի քան 260 հազար, իսկ Սսի կաթողիկոսի՝ 20 հազարից ավելի հայ ընտանիքներ* (Relation de l' évêque de Sidon. Raport sur les deux patriarches arméniens et leur nation.—Revue de l'Orient chrétien, vol. 3, Paris, 1898 (reprint 1966, N. Y.), p. 330, 333). *Չափիվ թե ընդունելի լինեն Կ. Կուցիայի այն հաշվարկները, որոնց համաձայն «XVI դարում Երևանի բնիկ բնակչության թիվը պետք է լիներ 5—8 հազար, իսկ Գանձակինը՝ 15—20 հազար»* (ქ. კუცია. აღმოსავლეთ..., გვ. 7: К. К. Куция. Указ. соч., с. 7).

[8] Tapu 633: *Ըստ այս հարկացուցակի քաղաքը բաղկացած էր 6 թաղերից (տե՛ս* Islam ansiklopedisi. Cilt 4, Istanbul, 1964, s. 311*)։ Թուրքական թահրիր դեֆթերների՝ որպես բնակչության թվի և էթնիկական կազմի ուսումնասիրման աղբյուրի մասին տե՛ս* J. Káldy-Nagy. Bevölkerungsstatistischer Quellenwert der Ĝizye-Defter und Taḥrīr-Defter.—Acta Orientalia, Budapest, 1960, t. XI, p 253–269.

ների ժամանակ հայ ազգաբնակչության բազմիցս կազմակերպված բռնագաղթերով։ Ուսումնասիրողների կարծիքով ընդհանուր առմամբ տեղահանվեց մոտ 500—600 հազար մարդ, որից մոտավորապես միայն 250 հազարը կարողացավ հասնել Իրան[9]։ Բռնագաղթից զերծ չմնաց նաև Երևան քաղաքի բնակչությունը։ Առաքել Դավրիժեցու վկայությամբ, 1604—1605 թթ. Երևանում նոր նշանակված Ամիրգունա խանին (զաչար ցեղի աղշա-ղությունու օյմաղից)[10] հանձնարարվել էր «յատուկ քաղաքին Երևանայ և երկրին Արարատու և նորին մերձակայ մասնավոր գաւառացն»[11] բնակչության տեղահանությունը։ Երևանից, ինչպես նաև Գանձակ, Թավրիզ, Արդեբիլ քաղաքներից բացառապես հայ բնակչության բռնագաղթ կազմակերպվեց նաև 1618 թ., երբ ռեգիոնում թուրքպարսկական պատերազմներից ու բազմիցս կրկնված բռնագաղթերից խուսափելով, հայ բնակչությունը ապաստան էր գտել հիշյալ քաղաքներում։ Դավրիժեցին (էջ 455—456), խոսելով այդ բռնագաղթի մասին, հաղորդում է, որ շահի հրամանով «գնացին նորին իշխանքն բազում զօրօք ի քաղաքն Երևան և ի գաւառս նորա, ի Գեանջայ և ի գաւառս, Թարվէզ և ի գաւառս նորա, յԱրտաւիլ և ի գաւառս նորա և սկսան քննութիւն և որոնումն առնել ի մէջ ազգին Հայոց, թէ որ ոք իցէ բնիկ բնական ի հարց և ի հաւուց տեղական, և որ ոք ոչ, այլ յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու. զբնիկսն թողին, և զեկամտացն զամենեցուն զանուանսն գրեցին ի քարտիսի, և կացուցին ի վերայ նոցա յազգէն Հայոց պետս և վերակացուս և անուանեցին զնոսա Մելիք, և նոցա հանձնեալ աւանդեցին յամենայն ժողովուրդսն, զի թէ ոք պակաչեսցի ի գրեալ ժողովրդոցն փախստեամբ կամ այլով կերպիւ, նոքա գտեալ ածցեն ի գումարս ժողովրդոցն, և թէ ոչ գտցեն, ինքեանք լիցին պարտաւորք թագաւորին և արժանիս սպանանելոյ։ Արդ այսպիսի օրինակաւ զամենեսեան հանին ի բնակեալ տեղեացն և վարեալ տարան ի Պարսկաստան»։

Եթե XVII դարի սկզբի շահաբբասյան բռնագաղթերը որոշ փոփոխություններ առաջացրին Երևանի բնակչության թվի մեջ, ապա քաղաքի բնակչության էթնիկական կազմում լուրջ տեղաշարժեր տեղի չունեցան։ Այն սկսեց համալրվել հայ բնակչության ներհոսքի շնորհիվ և քաղաքային կյանքը փաստորեն կանգ չառավ[12]։

Քաղաքի, ինչպես նաև ողջ Արարատյան երկրի բնակչության թվի ավելացման գործում մեծ դեր ունեցավ Երևանի Ամիրգունա (1604—1625) և Թահմասպ-ղուլի (1625—1635) խանների ծավալած գործունեությունը։ Արարատյան երկրում Ամիրգունա խանի վերանորոգչական աշխատանքներից առաջինը Զաքարիա Քանաքեռցին համարում է այն, որ նա «իսկոյն ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան»[13]։ Վերոհիշյալ խանների մի շարք արշավանքները Արև-

---

9 Լ. Գ. Դանեղյան. Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր. Երևան, 1978, էջ 103—106։

10 Վերջերս հրատարակված մի հոդվածում Ամիրգունան հայտարարված է «իսլամացած վրացի», որ անշուշտ սխալ է (տե՛ս Ե. Սարգսյան. Հին Երևանի հիշատակությունը հայ մատենագիրների մոտ.—«Էջմիածին», 1983, Ա, էջ 39)։ Ամիրգունայի մասին տե՛ս History of Shah 'Abbas the Great (Tarik-e 'Alamara-ye 'Abbasi) by Eskandar Beg Monshi. Translated by Roger M. Savory. Boulder, Colorado, Westview Press. Vol. II. 1978, p. 833, 847, 1311. Հմմտ. А. Д. Папазян. Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках. Ереван, 1972, с. 53

11 Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ. Վաղարշապատ, 1896, էջ 40։ Հովհաննես Մակվեցու վկայությամբ պարսիկները քաղաքն այնուհետև կրակի են մատնել (տե՛ս Ալիշան. Այրարատ, էջ 302)։

12 Հայկական հոծ բնակչության փաստն են նշում քաղաքում և նրա շրջակայքում պահպանված հայերեն շինարարական արձանագրությունները, թվագրված 1609, 1621, 1624, 1633, 1641—42 թթ. (տե՛ս Կ. Ղաֆադարյան. Երևան։ Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները. Երևան, 1975, էջ 232, ժամանակագրական տախտակ)։

13 Հաքարիա սարկաւագի պատմագրութիւն. հ. 1, Վաղարշապատ, 1870, էջ 45։ Այս աշխատության մեջ հետաքրքիր վկայություններ կան Արևմտյան Հայաստանից գերվող և Արարատ-

մրտյան Հայաստան և այնտեղից հայ բնակչության տեղափոխումը Արարատյան դաշտի գյուղերը (Քալար, Գոկգումբեթ, Կավակերտ, Սապատ և այլն) չէր կարող չնպաստել հայ տարրի ավելացմանը նաև Երևանում, որը հիմնականում «սնվում էր» շրջակա հայ գյուղերի հաշվին։ Միանգամայն ճիշտ գնահատելով Ամիրգունայի և նրա որդու՝ Թահմասպ-ղուլիի գործունեությունը, Հ. Փափազյանը նկատում է. «Հայության վերաբնակեցումը ոչ միայն տնտեսական, այլև պետական-քաղաքական տեսակետից խիստ կարևոր էր։ Ինչպես գիտենք, հետագա տասնամյակներում և հատկապես XVIII դարի սկզբներին, թուրքական ներխուժման ժամանակ, դարձյալ հայերն էին, որ համառ դիմադրություն ցույց տվին օսմանցիներին»[14]։

Ամիրգունա խանի կողմից ամրացվում է նաև Երևանի բերդը և ուժեղացվում նրա կայազորը ի հաշիվ Իրանի Ատրպատական (Աղերբայջան) և Արաղ (պարսկական Իրաք) շրջաններից հրավիրված թյուրքական ցեղերի։ Դեպքերի ժամանակակից Իսկանդար Մունշու վկայությամբ «իր հպատակներից և ենթակա մարդկանցից նրանց, որոնց նկատմամբ նա (Ամիրգունա խանը—Մ. Կ.) առավել վստահություն ուներ, տեղավորեց բերդի ներսում, իսկ մյուսներին բնակեցրեց բերդից դուրս [քաղաքում] և ավերակ գյուղատեղերում։ Աղերբայջանում գտնվող տարբեր էլերից, ուլուսներից և թարաքամաներից շատերին նա համոզեց ու բերեց Երևան, Կաջարների Աղջա-կոյունլու օյմաղին և Մուսաօղլի Բայաթ էլին, որոնք բարձրագույն հրամանի համաձայն Արաղից հատկապես եկել էին ծառայելու նրան, բոլորին էլ Երևանի ու Շարուրի հարմար վայրերում յուրդեր ու կշլաղներ տվեց»[15]։ Ինչպես երևում է բերված հատվածից թյուրք քոչվոր տարրը ամենևին էլ չի բնակեցվել քաղաքում և չէր էլ կարող այդպես լինել։

Աղբյուրները քաղաքի բնակչության էթնիկական կազմում որոշակի փոփոխություններ չեն նշում նաև 1635 թ. օգոստոսի 8-ին թուրքական Մուրադ IV սուլթանի կողմից քաղաքի գրավման հետ կապված[16]։ Բերդի գրավումից հետո նրա պարսկական կայազորը դուրս հանվեց և փոխարինվեց թուրքականով։ Աղբյուրների վկայությունները պարտված և բերդից վտարված պարսկական կայազորի թվի վերաբերյալ բավականին հակասական են։ Առավել վստահելի ենք համարում արշավանքի մասնակիցներից մեկի՝ Քյաթիբ Չելեբու տեղեկությունները, որոնց համաձայն Երևանի գրավումից հետո «Երևանի [բերդի] նախկին պաշտպան» Միր Ֆետահ օղլու գլխավորությամբ բերդից դուրս եկան

յան աշխարհ՝ գաղթեցվող բնակչության էթնիկական կազմի մասին։ Ըստ Զաքարիայի, Թահմասպ-ղուլի խանը, իր քալանթար Մասումին ուղարկելով Կարս, պատվիրում էր. «Զի թէ Ռիստոնեայ եհեռեցես. խաղաղութեամբ թերցես. իսկ թէ Տաճիկ. զարս կռառեսցես. և զեզս զերեսցես» (նույն տեղում, էջ 71)։ Այդպիսի արշավանքներից մեկի ժամանակ՝ կատարված խանի անձնական դեկավարությամբ, խանական արշավախումբը վերադառնում է «ընդ ինքեանս ունելով բազում օսմանցիս» (նույն տեղում, էջ 87)։ Սակայն վկայությունների բացակայության պատճառով չենք կարող պնդել, թե գերեվարված մահմեդական ազգաբնակչությունը բնակեցվել է բուն քաղաքում։

14 Հ. Փափազյան. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար).—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս.-գիտ.», 1977, № 1, էջ 33։

15 Նույն տեղում, էջ 32։ Տեքստը բերված է Հ. Փափազյանի թարգմանությամբ։ Ուշագրավ է, որ այդ հատվածը այսպես է ընկալվել նաև նրա անգլերեն թարգմանչի կողմից (տե՛ս History of Shah 'Abbas the Great, vol. 2, p. 930)

16 Ըստ Զաքարիա Քանաքեռցու պաշարումը տևել է 9 օր (Զաքարիա սարկաւագ. նշվ. աշխ., հ. 2, էջ 6)։ Համաձայն դեպքերի ժամանակ թուրքական բանակում գտնվող Քյաթիբ Չելեբու՝ թուրքական զորքերը արդեն Երևանի պարիսպների տակ էին 1635 թ. հուլիսի 29-ին, իսկ բերդի պաշտպանները հանձնվելու առաջարկով հանդես եկան օգոստոսի 8-ին («Джихан-нюма» и «Фезлеке» Кятиба Челеби как источник по истории Армении (XVII в.). Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна, Ереван, 1973, с. 149).

և Արդեբիլ ուղևորվեցին 5—6 հազար հրացանակիրներ[17]։ Սուլթան Մուրադ IV-ը Երևանում թողնելով 12 հազարանոց զորք[18], շարժվում է Թավրիզ։

1636 թ. վերջին շահ Սեֆուն հաշողվում է վերագրավել Երևանը։ Ճիշտ է, 1638 թ. թուրքական զորքերը Ղրիմի թաթարների հետ միասին ասպատակեցին Երևանի խանությունը, սակայն բուն քաղաքը այս անգամ նրանց ավերածություններից զերծ մնաց[19]։

Երևանի բնակչության էթնիկական կազմի ուսումնասիրման համար չափազանց արժեքավոր են XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Բ. Տավերնիեի տեղեկությունները Երևանի բերդի (ville) և քաղաքի (fauxbourg) բնակչության մասին։ Խոսելով բերդի (ville) մասին, ուր «խանն էր ապրում 'իր սպաների և զինվորների հետ միասին», Տավերնիեն միաժամանակ նշում է. «Երևանի թաղը (quartier), որը [բերդի] հյուսիս-արևմուտքում մի արվարձան (fauxbourg) է, ուր քսան անգամ ավելի ժողովուրդ կա, քան քաղաքում։ Սա բոլոր վաճառականների և արհեստավորների, ինչպես բոլոր հայերի ապրելատեղին է»[20]։ Իր կազմած Երևանի առաջին գծապատկերի բացատրագրում նա մեկ անգամ ևս կրկնում է. «Արվարձանը (fauxbourg) բնակեցված է քրիստոնյա հայերով»[21]։ Իր ուղեգրության մեջ մեկ այլ առիթով անդրադառնալով

---

17 Кятиб Челеби. Фезлеке, с. 147. Թուրք պատմաբան Նայիման, օգտվելով Քյաթիր Չելեբու նշված աշխատությունից, բերդից հեռացած պարսկական զորքի թիվը մի դեպքում նշում է 12 հազար մարդ, մեկ այլ դեպքում՝ 2 հազար (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. թարգմ., ներածություն, ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի. հ. Ա, Երևան, 1961, էջ 106, 107)։ Բերդում պաշարված պարսկական զորքը, որին, գրավումից հետո, սուլթան Մուրադը «բնաւ վնաս ոչ արարն, 12 հազար մարդ է համարում նաև Գրիգոր Դարանաղցին (Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ. Նրուսաղէմ, 1915, էջ 518)։

18 Кятиб Челеби. Указ. соч., с. 149. Երևանում թողնված թուրքական զորքերի թիվը 40 հազար մարդ է նշում Էվլիա Չելեբին, որն անշուշտ չափազանցություն է (Էվլիա Չելեբի, թարգմ., առաջաբան և ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի. Երևան, 1967, էջ 85։ Հմմտ.՝ Эвлия Челеби. Книга путешествия (Извлечения из сочинения турецкого путешественника XVII в.). Перевод и комментарии. Вып. 3. Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана. М., 1983, с. 153). Ըստ Դավրիժեցու, սուլթանը «ի նախարարաց իւրոց զոմն բարեբարոյ և խելացի իշխան՝ որում անունն էր Մուրթուզայ փաշա, հաստատեաց իշխան ի մէջ բերդին տասն և հինգ հազար սպառազէն և ընտրեալ հեծելօք» (Պատմութիւն Առաքել Դաւրիժեցւոյ, էջ 316—317. հմմտ. նաև Զաքարիա սարկաւագի պատմագրութիւն. հ. 2, էջ 6)։ Երևանում թողնված թուրքական զորքը Մուրթուզա փաշայի ղեկավարությամբ 1636 թ. արշավում և գերում է Նախիջևանի հայ բնակչությանը։ Դեպքերի ականատես, հայ կաթոլիկ գործիչ Հակոբ Հիսուսի վկայությամբ «Մուրթուզա փաշէն գերացուց գաւառս, ԳՃԻ (320) գերի Ապարաներ գնաց և զամենայն սպանածն, տարածն, օլքէս դուս ելաւ ՌԵՃ (1500) շանս» (տե՛ս Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան. հ. 1, Երևան, 1951, էջ 196)։ Սակայն ինչպես երևում է Փիլիպոս կաթողիկոսի կողմից 1650 թ. շահ Աբբաս II-ին ներկայացված խնդրագրից, նա 200 թուման կաշառքով կանխել է հայերի գերեվարումը և թույլ չի տվել, որ «հայերից մեկ տուն անգամ ցրվի և այլ տեղ գնա» (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. 1, Հրովարտակներ, պրակ երկրորդ (1601—1650 թթ.), կազմեց Հ. Դ. Փափազյան. Երևան, 1959, վավ. 39, էջ 141)։

19 Ղրիմի թաթարների այս և հետագայում բազմիցս կրկնված ավարառու ասպատակումներն ու գերեվարումները նկատի ուներ Վ. Վ. Բարտոլդը, երբ գրում էր. «Ислам и на Кавказе делал успехи на счет христианства, притом еще в XVII в.: распространение ислама шло не только с юга, но и с северо-запада, из Крыма» (В. В. Бартольд. Мусульманский мир.—Сочинения, т. VI, М., 1966, с. 245).

20 Les six voyages de Jean Baptiste Tavernier, ecuyer Baron d'Aubonne, en Turquie, en Perse, et aux Indes. Paris, t. I, MDCLXXIX (1679), p. 38.

21 J. B. Tavernier. Op. cit., p. 41. Ուշագրավ է, որ Տավերնիեի կողմից պատրաստվել են Երևանի համայնապատկերի մի քանի տարբերակներ, որոնց մեջ մեծ պլանով

այս հարցին, նա նորից շեշտում է. «Երևանը բնակեցված է բացառապես հայերով»[22]։

Տավերնիեի աշխատությունից օգտվելը միշտ էլ դժվարություններ է հարուցել։ Պատճառներից մի քանիսը ժամանակին նշվել են Մ. Ա. Պոլիևկտովի կողմից. «Տավերնիեի անձնական դիտարկումները նրա կողմից չեն տարբերակված երկրորդ ձեռքից ստացած վկայություններից, ժամանակագրական

Երևանը ըստ Տավերնիեի 1679 թ. հրատարակության

հաջորդականությունը չի պահպանված՝ մեծ ժամանակահատված (1631—1668) ընդգրկող բոլոր վեց ճանապարհորդությունները շփոթված են միմյանց հետ»[23]։ Վերջերս Մ. Զուլալյանի կողմից նկատվեց նաև Տավերնիեի երկում Ռաֆայել դյու Մանի և Գաբրիել Շինոնի աշխատություններից վերցված փոխառությունների փաստը[24]։ Պետք է նշել, սակայն, որ այս դիտողություններից վերջինը ամենևին չի վերաբերում Երևանի նկարագրությանը, որն աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ և որևէ հեղինակի չի կրկնում։ Սակայն առ այսօր հայագիտության մեջ տարակարծություններ կան Տավերնիեի Երևանում լինելու ժամանակի և դրանով պայմանավորված՝ նրա հաղորդումների հարցում։ Ուսումնասիրողների կողմից մի դեպքում նրա այցը Երևան թվագրվել է «յառաջ քան զառումն օսմանեանս»[25] (այսինքն մինչև 1635 թ.), մյուս դեպքում՝

պատկերվել են Երևանի առանձին մասեր (քաղաքը, բերդը և այլն)։ Այստեղ գետեղում ենք նրա գրքի 1679 և 1682 թթ. հրատարակություններից վերցված Երևանի գծապատկերի լուսանկարը։ Ուշադրություն ենք հրավիրում քաղաքում եռահարկ և երկհարկ տների առկայության վրա։

[22] J. B. Tavernier. Op. cit., p. 623 („Comme Erivan n'est habité que par des Arméniens").

[23] М. А. Полиевктов. Европейские путешественники XIII—XVIII вв. по Кавказу. Тифлис, 1935, с. 181.

[24] Ս. Կ. Զուլալյան. Եվրոպացի հեղինակները Հայաստանի և հայերի մասին (XVI—XVIII դդ.). Աղբյուրագիտական ակնարկ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 3, էջ 27։

[25] Ղ. Ալիշան. Այրարատ, էջ 303։ Մեկ այլ առիթով Ալիշանը դարձյալ շեշտում է. «Շարտէն իբր 50 ամաք յետ Դաւեռնիէի» (նույն տեղում, էջ 319)։

1655 թ.[26]։ Ղ. Ալիշանը հավանաբար ելել է այն հանգամանքից, որ Տավերնիեն իր առաջին ճանապարհորդությունը սկսելով 1631 թ., արդեն 1632 թ. փետրվարին գանվում էր Կոստանդնուպոլսում, մարտին՝ Թոխաթում, իսկ այնտեղից նա անցել է Էրզրում։ Էրզրումից մինչև Թավրիզ նրա անցած ճանապարհի նկարագրությունը լիովին համընկնում է Էրզրում—Թավրիզ առևտրական երթուղու հետ, որով անցնում էր Երևանով[27], առավել ևս, որ ուղեգրության այդ հատվածում էլ հաստատում է Երևանի նկարագրությունը։ Երկրորդ կարծիքի հեղինակները, Երևանի նկարագրությունը թվագրելով 1655 թ., նկատի են ունեցել հավանաբար այն հանգամանքը, որ այդ տարվա փետրվարին նա եղել է Երևանում, սակայն անուշադրության են մատնել Տավերնիեի ոչ միայն վերը նշված 1632 թ., այլև 1664 թ. սեպտեմբերի 14-ի, 1668 թ. փետրվարյան այցելությունները Երևան[28]։

Տավերնիեի Երևանի նկարագրության քննությունը ցույց է տալիս, որ այն արտացոլում է ոչ միայն 1632 կամ 1655 թթ., այլև նրա հետագա այցելություններից ստացած ընդհանուր տպավորությունները։ Եթե իր ճանապարհորդությունների միջև ընկած ժամանակահատվածներին վերաբերող նկարագրության ժամանակ նա մասամբ օգտվել է իր ժամանակի այլ եվրոպական աղբյուրներից[29], ապա իր բացակայության ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների մյուս մասը նա փորձել է ճշգրտել Երևանում եղած ժամանակ։ Բնորոշ օրինակ է հետևյալ փաստը. իր երկրորդ այցելության ժամանակ նա փորձել է ճշտել 1635—1636 թթ. թուրքերի կողմից քաղաքի գրավման և պարսիկների կողմից նրա վերագրավման հետ կապված մանրամասնությունները։ Արդյունքը հանդիսացել է քաղաքի իր կողմից կազմված գծապատկերում Երևանի բերդի գիմաց եղած բերդատիպ ամրության կառուցումը շահ Սեֆոն վերագրելը։

Այս և նման այլ օրինակներ թույլ են տալիս անելու հետևյալ եզրակացությունը. Տավերնիեի Երևանի նկարագրությունը չի արտացոլում միայն 1632 կամ 1655 թթ. վիճակը, այլ ավելի դինամիկ է, հեղինակի կողմից այն իր հետագա այցելությունների ժամանակ ճշգրտվել ու հարստացվել է և իրականում արտացոլում է նրա առաջին (1632 թ.) և վերջին (1668 թ. փետրվար) այցերի միջև ընկած ժամանակահատվածում Երևանի իրական պատկերը։ Այս պատճառով Երևանի Տավերնիեի տված նկարագրությունը պետք է թվագրել ժամանակագրորեն ավելի լայն՝ 1632-ից մինչև 1668 թ., քանի որ ստույգ է նշված ժամանակահատվածի համար՝ արտահայտելով քաղաքի զարգացման և նրա էթնիկական կազմի վերաբերյալ մոտ 40 տարվա տպավորություններ։

1647 թ. Երևան այցելած թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբու հաղորդումները թույլ են տալիս մոտավոր ճշգրտությամբ վերականգնել Երևան քաղաքի և բերդի բնակչության քիճակագրական պատկերը։ Համաձայն Էվլիա Չելեբու՝ Երևանը «մոտ 3000 բերդապահ զինվորներ, 3000 խանի զինվորներ և 7000 էյալեթի զինվորներ ունի», իսկ բուն քաղաքում նրա հաշվումներով կային «մոտ 2060 հողածածկ տներ»[30]։ Էվլիա Չելեբու հաղորդումից կարելի է եզ-

---

26 Ն ր. Շ ա հ ա զ ի զ. նշվ. աշխ., էջ 122—123։ Թ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 332—333։

27 Թավրիզ—Էրզրում առևտրական երթուղու մանրակրկիտ քննարկումը տե՛ս Վ. Փ ա փ ա զ յ ա ն. Թավրիզ—Ջմյուռնիա առևտրական մայրուղու Թավրիզ—Էրզրում հատվածն ըստ Ջաքարիա Ագուլեցու «Օրագրության».—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 8, էջ 61—68։

28 Այդ մասին տե՛ս Stéphane Yerasimos. Introduction dans „Jean-Baptiste Tavernier. Les six voyages de Turquie et de Perse". Paris, t. I, 1981, p. 10, 13, 16, 17, 21, 23.

29 Օրինակ, իր իսկ հաղորդմամբ նա մասամբ օգտվել է „Nouvelle relation du sérail du Grand Seigneur, comprenant plusieurs singularités qui jusqu'ici n'ont point été mises en lumiere" (Paris, 1675) աշխատությունից։

30 Է վ լ ի ա Չ ե լ ե բ ի. նշվ. աշխ., էջ 85։ Э в л и я Ч е л е б и. Указ. соч., с. 155. Այս տեղեկանքը բերված է նաև Ս. Մամեդովի կողմից, սակայն վրիպմամբ նշված է 2600 (С. М а-

րակացնել, որ Երևանի խանության ունեցած 13 հազարանոց պարսկական զորքից[31] Երևանի բերդում էին գտնվում միայն 3000-ը («բերդապահ»)։ Միաժամանակ պետք է նշել, որ բուն քաղաքում եղած «2060 հողածածկ տներում» մեր հաշվումներով պետք է ապրեր մոտ 3500 ընտանիք կամ ամենաքիչը՝ 17—20 հազար մարդ[32], եթե քաղաքային ընտանիքի անդամների միջին թիվը ընդունենք 5—6 մարդ[33]։ Համեմատության համար բերենք Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո կատարված մարդահամարի տվյալները, որոնց համաձայն Երևան քաղաքում կար 1730 տուն, ուր բնակվում էին 2751 ընտանիք[34]։

Էվլիա Չելեբու տվյալների քննարկումը ցույց է տալիս, որ վերանայելի է Կ. Կուցիայի հայտնած այն կարծիքը, թե «Երևանի բնակչությունը միայն XVIII դարի երկրորդ կեսին հասավ 15 հազար մարդու»[35]։ Միաժամանակ, եթե նկատի ունենանք Տավերնիեի վկայությունները, ապա կարելի է ենթադրել, որ քաղաքի 2060 տներում ապրում էր հիմնականում հայ բնակչություն։

1650 թ. նոյեմբերի 13-ին և հետագայում կրկին Երևան այցելած Դը լա Բուլէ լը Գուզը[36] և Դը Լալենը 1665 թ. մայիսի 20-ին Երևանից Լյուդովիկոս

медов. Исторические связи азербайджанского и армянского народов во второй половине XVII—первой трети XVIII в. Баку, 1977, с. 82), *իսկ Թուրքական հանրագիտարանում՝ 2000* (Mırza Bala. Erivan.—Islam ansıklopedisı, cilt 4, Istanbul, 1964, s. 311).

[31] *Երևանի խանության սահմաններում եղած ողջ զորքերի թիվը 12 հազար մարդ են նշում նաև* XVII *դարի և* XVIII *դարի սկզբի եվրոպական աղբյուրները (տե՛ս* Estat de la Perse en 1660, par le père Raphaël du Mans, supérieur de la mission des capucins d'Ispahan. Publiée avec notes et appendice par Ch. Schéfer. Paris, 1890, appendice XXII, p. 301 et suiv.; Sanson. Voyage ou relation de l'état présent du royaume de Perse. Paris, 1695, p. 106. *Սանսոնի այս տեղեկության բառացի կրկնությունը տե՛ս* Le Febre de Fontenay. Journal historique du voyage de l'ambassadeur de Perse en France. Février 1715. Paris, 1715. p. 62).

[32] *Ս. Մամեդովը Էվ. Չելեբու հաղորդած տների (այլ ոչ թե ընտանիքների) թիվը բազմապատկելով 5—6 հոգով, ենթադրում է, որ քաղաքի բնակչությունը եղել է 10—12 հազար մարդ, որն անշուշտ սխալ է* (С. Мамедов. Указ. соч., с. 82).

[33] *Ընտանիքի անդամների միջին թիվը տարբեր է Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում։ Ելնելով Զաքարիա Քանաքեռցու տվյալներից, կարելի է մտածել, որ այն բավական բարձր է եղել նաև Արարատյան երկրում։ Ըստ նրա հաղորդման Բուրսայում մահացած Կարբի գյուղաքաղաքի նախկին բնակիչ Հակոբջանի թողած երեք որդիների ընտանիքները* «ամենեքեան կան միարան աւելի քան Լ՝ (30) ի միում տան, արու և էգ: *Եւ սապ որդի Տովմաթ-բեկին պարոն Այվազ էր գլխաւոր ամենեցունցն» (Զաքարիա սարկավագ. Նշվ. աշխ., հ. 2, էջ 132)։ Նման բազմաթիվ տվյալներ կան հայկական ձեռագրերի հիշատակարաններում։ Պետրոս Պետիկը Նախիջևանի հայ կաթոլիկ համայնքի եպիսկոպոսանիստ Ապարաներ գյուղում յուրաքանչյուր տանը հաշվում էր «քսան, տասնհինգ, տաս իսկ ամենաքիչը՝ հինգ հոգի»* (Bedik Petrus. Cehil Sutun. Viennae, 1678, p. 379).

[34] И. Шопен. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб., 1852, с. 468, 543—546.

[35] ჯ. ჯ[illegible], გვ. 7; *համտ.* А. Р. Иоаннисян, П. Арутюнян. Армения.—В кн.: Очерки истории СССР. Период феодализма. Россия во второй половине XVIII в. М., 1956, с. 738.

[36] *Դը լա Բուլէ լը Գուզի աշխատությունը* (Les voyages et observations du Sieur de La Boullaye Le Gouz, gentil-homme angévin. Paris, 165), *որտեղ նա անդրադառնում է իր այս այցին, ձեռքի տակ չունենալու պատճառով չենք քննում։ Համառոտ վերապատմումը տե՛ս* М. И. Тамамшев. Путешествия де-Лабулэ ла-Гуза по Азии.—Кавказский вестник, Тифлис, кн. XV, № 3, март, 1901, с. 44—60.

XIV-ին հասցեագրած իրենց նամակում հաղորդում են, թե Երևանի «բերդում, ինչպես քաղաքում, կան մեծ քանակությամբ հայեր»[37]։

Հայ բնակչության թվական գերակշռությունը քաղաքում ևս մեկ անգամ արձանագրված է 1670-ական թթ. Երևան այցելած հոլանդացի վաճառական Յա. Ստրեյսի կողմից. «Երևանը բնակեցված է մեծ մասամբ աղքատ հայերով»[38]։ Ըստ ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի վկայության 1673 թ. «Հայաստանի մայրաքաղաք» Երևանի բերդում եղած 800 տներում ապրում էին «բնիկ պարսիկներից» կազմված 2 հազարանոց կայազորը և փոքրաթիվ առևտրաարհեստավորական տարրը՝ բաղկացած հայերից[39]։

Թե 1639 թ. հետո ընկած համեմատաբար երկարատև խաղաղ ժամանակահատվածը ինչքան էր ազդել քաղաքի բնակչության թվի ավելացման վրա, կարելի է դատել Ոսկան վարդապետի մի վկայությունից, որի համաձայն արդեն 1670-ական թթ. քաղաքում հաշվվում էր 4 հազար տուն[40]։

Երևանում բնակչության թվի որոշ փոփոխություններ տեղի ունեցան 1679 թ. հունիսի 4-ից սկսված մի շարք կործանարար երկրաշարժերի հետևանքով։ Ժամանակակից և ականատես Գրիգոր Երևանցու վկայությամբ «ի սաստկութենէ շարժին բլաւ քաղաքն Երևան հանդերձ բերդով և պարսպաւ, կործանեցան տունք և ապարանք գեղեցկաշէնք, քակեցան եկեղեցիք և վանորայք», իսկ «մեռելոցն ոչ գոյր թիւ»[41]։ Զաքարիա Ագուլեցու վկայությամբ «Երևանայ բերթն, խանի տներն, թէ համամ, թէ մաշիթ, թէ մինարէ, ամէն վեր եկավ։ Մինչի Ը, Թ (8, 9) օրի հողի տակի մեռել ին հանում։ Տուն կեր մին Ե, Ը, Թ (5, 8, 9) ջան մեռավ»[42]։ Աղբյուրների համաձայն երկրաշարժին զոհ գնաց Երևանից և նրա շրջակա բնակավայրերից մոտ 8 հազար հոգի[43]։

---

37 Estat de la Perse en 1660, par Raphaël du Mans, p. 302 («Il y a dans le chasteau aussi bien que dans la ville [d'Erivan], quantite d'Arméniens»): Ա. Գ. Հովհաննիսյանը (Դրվագներ հայ ազատագրական մաքի պատմության, դիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 177, 178), quantité d'Arméniens արտահայտությունը թարգմանել է «որոշ քանակությամբ հայեր», որ ճիշտ չէ։ Իմաստային առումով ավելի մոտ է Հ. Անասյանի «ստվարաթիվ հայեր» թարգմանությունը (տե՛ս Հ. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում։ Պատմական հետազոտություն. Երևան, 1961, էջ 154—155).

38 Я. Я. Стрейс. Три путешествия. Перевод Э. Бородиной, ред. А. Морозова. М., 1935, с. 224.

39 Voyages du Chevalier Chardin en Perse, et autres lieux de l'Orient. Amsterdam, t. I, MDCCXXXV (1735,) p. 211—212 հենվելով Արևելքից կաթոլիկ քարոզիչների ուղարկած հաղորդումների վրա, բերդում մահմեդական մեծամասնության կողքին փոքրաթիվ հայ բնակչություն է արձանագրում նաև ճիզվիտների կենտրոնի լեկավարներից Թ. Շ. Ֆլորիոն։ (Estat présent de l'Arménie, tant pour le temporel que pour le spirituel. Avec une description du pays et des moeurs de ceux qui l'habitent par le père Th. Ch. Fleurlau. Paris, 1695, p. 216). Ընկալելով, որ այս տեղեկությունը վերաբերում է միայն բերդին, կակաշի և Տեկտանդերի ուղեգրությունը ծանոթագրելիս այն ողջ քաղաքի վրա է տարածել հայտնի արևելագետ Շ. Շեֆերը։ (Iter Persicum ou description du voyage en Perse entrepris en 1602 par Étienne Kakasch de Zalenkémeny. Traduction publiée et anotée par Ch. Schéfer. Paris, 1877, p. 117, note (50).

40 Histoire critique de la creance et des coutumes des nations du Levant. Publiée par le Sr. de Moni. Francfort, 1684, p. 210. Հմմտ. Ա. Գ. Հովհաննիսյան. Դրվագներ, գ. 2, էջ 361։

41 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան. հ. 2, Երևան, 1956, էջ 279։ Հմմտ. Ն. Ակինյան. Հին Երևանը (գրախոսություն Եր. Շահազիզի «Հին Երևանը» աշխատության).—«Հանդես ամսօրյա», Վիեննա, 1934, № 5—7, մայիս-հուլիս, էջ 336։ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, կազմեց Ն. արք. Պողարեան, հ. 7, Երուսաղեմ, 1974, էջ 108—109։

42 Զաքարիա Ագուլեցու օրագրությունը. Երևան, 1938, էջ 143։

43 Վ. Ստեփանյան. Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում. Երևան, 1964, էջ 80—81։ Որ այդ 8 հազար հոգին պետք է հիմնականում հայեր լինեին,

Քաղաքի ունեցած կարևորագույն ռազմաստրատեգիական գիրքն էր պատճառը, որ պարսկական կենտրոնական իշխանությունների կողմից հապճեպորեն վերացվեցին երկրաշարժի պատճառած վնասները, իսկ հայերին կարգադրվեց վերականգնել իրենց փլված տներն ու եկեղեցիները։

Երևանի բնակչության էթնիկական կազմի ուսումնասիրման համար կարևոր արժեք են ներկայացնում երկրաշարժից 20 տարի անց Երևանում եղած Իսրայել Օրու տեղեկությունները։ Օրու մոտ Երևանի նկարագրությունը առաջին անգամ հանդիպում է 1669 թ. սեպտեմբերի 22-ին Պֆալցի կուրֆյուրստին ներկայացրած Հայաստանի ազատագրության իր ծրագրում («Պֆալցյան ծրագիր»)[44]։ Ա. Հովհաննիսյանի կարծիքով «Օրին տարբերանշում է Երևանի բերդն ու բուն քաղաքը։ Վերջինիս բնակիչները բացառապես հայեր են, բերդում՝ հիմնականում «մուսուլմաններ». հայերից լինում են այդտեղ միայն փողերանոցի և զինանոցի արհեստավորները, որոնց թիվը երեք հարյուր մարդուց շատ չէ։ Բերդում նստող խանն ունի մոտ 200 զինվոր»[45]։ Երևանի այս նկարագրությունը Օրին կրկնում է 1701 թ. հուլիսի 25-ին Մոսկվայում, դեսպանական ատյանում, Հայաստանի ազատագրության իր «Մոսկովյան ծրագրում»[46]։ Այս փաստաթղթում ևս նրա կողմից հստակ տարբերակվում են բերդն ու բուն քաղաքը։ Մեզ հետաքրքրող հարցում միակ էական փոփոխությունն այն է, որ այժմ Օրին իր նոր ծրագրում բուն քաղաքում հայ աղգաբնակչության մեծամասնության կողքին ցույց է տալիս նաև 200 տուն մահմեդականություն, որն իր նախորդ նկարագրության մեջ բացակայում էր[17]։

Իր «Մոսկովյան» ծրագրում Օրին հնարավոր էր համարում քաղաքի գրավումը «առանց դժվարությունների», քանի որ հայերը այնտեղ մեծամասնություն էին կազմում[48]։

Եթե քաղաքի էթնիկական կազմի մասին Օրու հաղորդումը հակասության մեջ չէ այլ աղբյուրների հետ և արժանի է լիակատար վստահության, ապա որոշ տարակարծությունների տեղիք են տալիս նրա տվյալները բերդի կայազորի (200 մարդ) վերաբերյալ։ Վերևում ցույց տրվեց, որ XVII դարում Երևանի բերդի կայազորը համարյա միշտ կազմել է 2—3 հազար մարդ։ Սակայն, ըստ որոշ տեղեկությունների, այդ կայազորը մշտապես բերդի ներսում չէր գտնվում։ Խաղաղ ժամանակ «զորքի մեծ մասն ապրում էր քաղաքից դուրս՝ գյուղերում»[49]։ Ուրեմն պետք է կարծել, որ Օրին հավանաբար նկատի ուներ խանի կողմից մշտապես պահվող բերդապահ կայազորի փաստական թիվը, այլ ոչ թե նրա տրամադրության տակ եղած զորքի այն նվազագույն քանակը, որ առաջին իսկ կանչով հավաքվում էր բերդի պարիսպների մեջ[50]։ 1701 թ.

վկայում է այն փաստը, որ երկրաշարժերից, համաճարակներից և այլ արհավիրքներից (մորեխի հարված) տուժում էր գլխավորապես նստակյաց բնակչությունը։

44 Г. А. Эзов. Сношения Петра Великого с армянским народом. Документы. СПб., 1898, док. 9, с. 28—44.

45 Ա. Հովհաննիսյան. Դրվագներ..., գիրք 2, էջ 361։ Հմմտ. Г. А. Эзов. Указ. соч., с. 33—34.

46 Այս փաստաթուղթը հրատարակություններում ունի հետևյալ վերնագիրը՝ «Памятная запись Ори» (Г. А. Эзов. Указ. соч., док. 43, с. 85—91; հմմտ.՝ Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. Под ред. А. Г. Иоаннисяна. Т. II. ч. I, Ереван, 1964, док. 85, с. 210—216).

47 Г. А. Эзов. Указ. соч., с. 88; Армяно-русские отношения, с. 213.

48 Ուշագրավ է, որ նույն փաստաթղթում խոսելով Թավրիզի մասին, Օրին գտնում էր, որ այն գրավելու համար մեծ զորք է հարկավոր, քանի որ «кругом ево християн немногоэ (Армяно-русские отношения. с. 213—214).

49 Raphael du Mans. Op. cit., appendice XXII, p. 301 et suiv.

50 Հետաքրքիր է, որ նույնիսկ XVIII դարի առաջին քառորդի վերջին, չնայած դեպի Երևան Թուրքական նախապատրաստվող արշավանքի ա՛ղաղներին, աղբյուրները արձանագրում

օգոստոսի 8-ին «պարսկական Հայաստանի մայրաքաղաք» Երևան այցելած Տուրնեֆորի վկայության համաձայն, բերդապահ կայազորը բաղկացած էր 800 ընտանիքից կամ 2500 մարդուց[51]։ Պարսկաստանի կենտրոնական իշխանությունները, նկատի ունենալով քաղաքի ռազմաստրատեգիական կարևորագույն դիրքը, երբեք չէին փոքրացնում այս զորքի քանակը։ XVIII դարի առաջին քառորդում կազմված պարսկական պաշտոնական աղբյուրներից մեկի՝ «Թազքիրաթ ալ-մուլուքի» տվյալներով, նշված դարի սկզբին, սեֆյան Իրանի վիլայեթների բեկլարբեկներից (խաներից) ոչ մեկը չուներ այնքան անձնական զորք, ինչքան Երևանի բեկլարբեկը[52]։

Վիլայեթներ	Բեկլարբեկի անձնական զորքերի թիվը (մարդ)
Թավրիզ	900
Չուխուր-Սաադ (Երևան)	2860
Ղարաբաղ	1430
Շիրվան	2581
Հերաթ	2682
Մաշհադ	670
Ղանդահար	1123
Մերվ	2352
Աստարաբադ	1503
Համադան	700
Քուրդիստան	1000
Ֆարս	2000

Քաղաքի էթնիկական կազմի մասին Իսրայել Օրու հաղորդումները ևս մեկ անգամ հաստատվում են 1700 թ. մարտի 10-ին Երևան այցելած գերմանացի ճանապարհորդ Գասպար Շիլինգերի վկայություններով։ Նրա տեղեկության համաձայն «[Երևան] քաղաքի (Stadt) ներսում ապրում են միայն պարսիկներ։ Քաղաքի շատ ավելի մեծ արվարձանում (Vorstadt), սակայն, ապրում են մեծ մասամբ հայկական դավանանքի շատ քաղաքացիներ (Bürger) և համաքաղաքացիներ (Mit-Bürger), արհեստավորներ, առևտրականներ, որոնք իրենց ժամերգությունը կատարում են տարբեր եկեղեցիներում և որի համար էլ պարսիկներին հարկ են վճարում»[53]։ Գ. Շիլինգերի նշած «քաղաքը» (Stadt)

են. «Ցարևան ազար փոքր կայ» (տե՛ս ժամանակագրություն Պետրոս դի Սարդիս Դիլանէնցի.— «Կռունկ Հայոց աշխարհին», Տփխիս, 1863, թիւ Գ, էջ 204, § 122)։

51 P. de Tournefort. Relation d'un voyage du Levant. T. III, Lyon, 1717, p. 198. Տարակարծությունների տեղիք է տալիս Պ. Լուկայի այն հաղորդումը, թե բերդում հայ փոքրամասնության (առևտրականներ ու արհեստավորներ) կողքին ապրում են կայազորի 5 հազար անդամ։ Երևանի բերդում այդքան մարդ հավաքվում էր հիմնականում պատերազմի ժամանակ։ Լուկայի հաղորդած թիվը, անկախ այն հանգամանքից, որ այն չի հաստատվում այլ աղբյուրներով, վերաբերում է ոչ թե բերդում մշտապես պահվող կայազորին, այլ ողջ խանության զորքին (Voyage du Sieur Paul Lucas au Levant. T. II, Paris. 1714. p. 254, 260).

52 Տե՛ս Tadhkirat al-mulūk, a manual of Safavid administration. Persian text in facsimile, with Translation and Commentary by V. Minorsky („E. J. W. Gibb Memorial" Publications, New Series, vol. XVI). London, 1943, p. 100—105. Ա. Հովհաննիսյանի աշխատության մեջ (Դրվագներ..., գիրք 2, էջ 361) նույն աղբյուրից վերցված՝ Երևանի բեկլարբեկի զորքերի քանակը 2860-ի փոխարեն վրիպակի պատճառով դարձել է 2660։

53 G. Schillinger. Persianische und Ost-Indianische Reise. Nürnberg, 1716, S. 118 („Innerhalb dieser Stadt wohnen fast lauter Persianer; in der gar grossen Vor-

բերդն է, իսկ բուն քաղաքը նրա մոտ հանդես է գալիս որպես «արվարձան» (Vor-Stadt)։ Շիլինգերի կողմից այս երկու հասկացությունների տարբերակումը պարզվում է նրա իսկ հաղորդումից, թե «արվարձանը տասն անգամ ավելի ընդարձակ և մարդաշատ է, քան ներքին քաղաքը (Stadt)»[54]։

XVIII դարի սկզբին կաթոլիկ քարոզչության առաքելությամբ Երևան եկած ճիզվիտական միաբանության անդամ Մոնիեի վկայությամբ՝ «քաղաքը (ville), որն ավելի շատ ողողված է պարտեզներով և խաղողի այգիներով, քան տներով, դրսից շրջափակված է կրկնակի պարսպով։ Կարելի է հաշվել մոտ չորս հազար բնակիչ։ Հայերը կազմում են միայն մեկ քառորդը, չնայած ունեն չորս եկեղեցի»[55]։

Վկայությունից հստակ երևում է, որ խոսքը բացառապես բերդի բնակչության մասին է։ Նախ՝ բուն քաղաքում բնակչության ընդհանուր թիվը երբեք այդքան փոքր չի եղել, երկրորդ և ամենակարևորը՝ խոսքը Երևանի «դրսից կրկնակի պարսպով շրջափակված» հատվածի մասին է, որն անկասկած բերդն է, քանի որ քաղաքը պարսպապատ չէր[56]։

Մոնիեի այս տեղեկությունը հետագայում թափանցել է XVIII դարի ֆրանսիական ինժեներ և պատմաբան, նույնպես ճիզվիտ, Մամի-Կլերակի (1690—1750) «Պարսկաստանի պատմություն» աշխատությունը, որի հետևանքով էլ այն դրվել է ավելի լայն շրջանառության մեջ[57]։ XVIII դարի առաջին քառորդի Պարսկաստանի պատմությունը շարադրելիս նրա համար որպես հիմնական սկզբնաղբյուրներ են ծառայել ճիզվիտական միաբանության ան-

---

Stadt aber viel Kauff-Leuth, Handwercker, Burger und Mit-Bürger, meistens Armenischer Religion, die ihren Gottes-Dienst in mehreren besonderen Kirchen verrichten und denen Persern darumb den Tribut geben"). Տվյալ հատվածում «քաղաքացիներ» և «համաքաղաքացիներ» տերմինների տակ համապատասխանաբար պետք է հասկանալ բերդաբնակ և բուն քաղաքի հայերին։

[54] Նույն տեղում, էջ 110 („Vor-Stadt, so gegen zehenmahl mehr weit-läuffiger und volckreicher ist, als die innerste Stadt")։

[55] Nouveaux memoires des missions de la Compagnie de Jésus dans le Levant. T. III, Paris, MDCCXXIII (1723), p. 37. Այլ հրատարակություններ տե՛ս Lettres édifiantes et curieuses, écrites des missions etrangères. Memoires du Levant. Nouvelle edition. T. III, Paris, MDCCLXXX (1780), p. 25.

[56] Ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանը, որի ուշադրությունից վրիպել է, որ Մոնիեի այդ հաղորդումը վերաբերում է բերդին, այն համարել է սակասական, գտնելով, որ «Մոնիեն ասում է թեկուզ հենց Երևանի հին հայ եկեղեցիների քանակը։ Նշենք, որ Ա. Հովհաննիսյանի աշխատության մեջ («Երվագներ...», գիրք 2, էջ 361) Մոնիեի հաղորդած բնակչության ընդհանուր թվի՝ 4 հազարի փոխարեն վրիպմամբ տպրել է 40000։ Ս. Մամեդովը, այս հաղորդումը վերցնելով վերջին աշխատությունից, ուր Մոնիեի վկայությունը հիշատակված է բերված և բնակչության («Согласно сообщению иезуита, отца Монье, который писал о миссионерской деятельности в Эривани в XVIII столетии, в самом городе (բերդում) в его время было не более 4000 жителей...», см. Х. Ф. Б. Армения. Путевые очерки и этюды. Тифлис, 1910, ч. I, с. 272, прим. 1), այն ոչ միայն տարածում է XVII դարի II կեսի վրա, այլև վերագրում է ամբողջ քաղաքին։ Հետևապես սխալ է եզրակացնել, թե «есть данные, свидетельствующие о том, что во второй половине XVII в. в Ереване из 4 тыс. жителей армян была всего 1 тыс. человек, а остальные были татары (т. е. азербайджанцы.—С. М.)» (см. С. Мамедов. Указ. соч., с. 88)։ Հայտնաբերելով Մոնիեի հիշատակությունն մասին տե՛ս նրա («Մոնիեի») և նրա կազմած ամբողջական ցանկի՝ Ա. Գ. Հովհաննիսյան։ Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության աղբյուրագիտության («Աղբյուրագրությունները Ա. Գ. Արրահամյանի. Երևան, 1968, էջ 21, 24, 26, 60 և այլն)։

[57] [Le Mamye-Clairac]. Histoire de Perse, depuis le commencement de ce Siècle. Paris, t. II, MDCCL (1750), p. 134. Մամի-Կլերակի կենսագրությունը տե՛ս Grand dictionnaire universel du XIX-e siècle. Paris, t. X, p. 875.

դամներ Ֆլորիոյի, Յ. Կրուշինսկու[58], Մոնիեի և ուրիշների իր ժամանակ արդեն տպագիր աշխատությունները։ Տեքստերի համեմատական քննությունը ցույց տվեց, որ Մամի-Կլերակը Երևանի բնակչության վերաբերյալ իր տեղեկությունները վերցրել է Մոնիեի աշխատությունից։ Զուգահեռ բերում ենք համապատասխան հատվածները.

ՄՈՆԻԵ	ՄԱՄԻ-ԿԼԵՐԱԿ
„La ville (d'Erivan) est au-dessus enfermee d'une double muraille, plus remplie de jardins & de vignes, que de maisons. On y compte environ quatre mille ames. Les Armenieus n'en font que la quatrième partie, & ont cependant quatre Eglises [59].	„La ville (d'Erivan) est enfermée d'une double muraille & plus remplie de jardins & de vignes que de maisons. Les Arméniens formoient alors le quart de ses habitants·[60].
(Քաղաքը, որն ավելի շատ ողողված է պարտեզներով և խաղողի այգիներով, քան տներով, դրսից շրջափակված է կրկնակի պարսպով։ Կարելի է հաշվել մոտ չորս հազար բնակիչ։ Հայերը կազմում են միայն մեկ քառորդը, չնայած ունեն չորս եկեղեցի)։	(Քաղաքը, որն ավելի շատ ողողված է պարտեզներով և խաղողի այգիներով, քան տներով, շրջափակված է կրկնակի պարսպով։ Հայերն այն ժամանակ կազմում էին բնակչության մեկ քառորդը)։

Մոնիեի վկայությունը Մամի-Կլերակի կողմից ոչ միայն օգտագործվել, այլև որոշ չափով նաև խմբագրվել է։ Երկու տեքստում էլ խոսքը բացառապես բերդի մասին է, ուր կայազորի անդամների կողքին արդեն հաշվվում էր հազար հայ բնակիչ։ Մամի-Կլերակի հաղորդումը, իր սկզբնաղբյուրի նման, ուսումնասիրողների կողմից թյուրիմացաբար վերագրվել է բուն քաղաքին։ Ա. Հովհաննիսյանը, որն ամենևին էլ խնդիր չէր դրել քաղաքի բնակչության էթնիկական կազմի ուսումնասիրությունը, վկայակոչելով միայն Մամի-Կլերակի աշխատությունը, գրում է. «Աղբյուրների տվյալներով հայերը կազմում էին Երևան քաղաքի բնակչության քառորդ մասը, իսկ ադրբեջանցիները՝ մեծամասնությունը»[61]։ Վերևում բերված տեղեկությունները և նրանց համադրումը ցույց են տալիս, որ նման կարծիքը հիմնազուրկ է։

XVIII դարի առաջին քառորդի վերջում թուրք ռազմականների կողմից Երևանի պաշարման և հայ ազգային-ազատագրական պայքարի կարևոր օղակներից մեկը հանդիսացող՝ Երևանի հայ ազգաբնակչության զինված ինքնապաշտպանության նկարագրությունները ևս մեկ անգամ հաստատում են նախորդ շրջանի աղբյուրների վկայությունները, թե հայ բնակչությունը բուն քաղաքում բացարձակ մեծամասնություն էր կազմում։

---

[58] [Du Cerceau]. Histoire de la dernière revolution de Perse par le pere Y. Krusinski. T. I—II, Paris, 1728—1742. Հմմտ. Մ. Զուլալյան. Նշվ. աշխ., էջ 35—36.

[59] Nouveaux memoires..., t. III, p. 37; Lettres édifiantes..., t. III, p. 25.

[60] [Le Mamye-Clairac]. Op. cit., p. 154.

[61] «Армяно-русские отношения». Т. II, ч. I, Историческое введение, с. LXXVII. Վկայակոչելով Ա. Հովհաննիսյանին, նույնը կրկնում է Ս. Մամեդովը (Նշվ. աշխ., էջ 83)։

ДИНАМИКА ЧИСЛЕННОСТИ И ЭТНИЧЕСКОЙ СТРУКТУРЫ НАСЕЛЕНИЯ ЕРЕВАНА В 1600—1724 гг.

М. М. КАРАПЕТЯН

Резюме

Для комплексного исследования этнополитической и социокультурной истории средневековой Армении важное значение имеет исследование динамики этноконфессиональной структуры городского и сельского населения. При изучении этноконфессиональной структуры населения Еревана исследователями не учитывались строительные особенности средневекового города, выражающие его общественные функции; сведения, относящиеся к озмому городу, часто приписывались крепости, и наоборот. Изучение источников (Аракел Даврижецн, Закария Канакерци, Искандар Мунши, Кятиб Челеби, Эвлия Челеби, де Ла Булэ ла Гуз, де Лаален, Р. дю Ман, Тавернье, Я. Стрейс, Шарден, Сансон, Турнефор, Исраэл Ори, Шиллингер, Монье, Мами-Клерак и др.) показало, что в XVII в. численность населения Еревана составляла примерно 17—20 тыс. человек, в подавляющем большинстве это были армяне. В крепости города стоял гарнизон, состоявший из персов, тюрок, курдов и армян.